

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

30 հոկտեմբերի 2012 թվականի

թիվ 202

քաղ. Մոսկվա

Նույնական ապրանքներով գործարքի արժեքի հիման վրա (մեթոդ 2) եւ համանման ապրանքներով գործարքի արժեքի հիման վրա (մեթոդ 3) ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդները կիրառելու մասին

«Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 1-ին հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կցված «Նույնական ապրանքներով գործարքի արժեքի հիման վրա (մեթոդ 2) եւ համանման ապրանքներով գործարքի արժեքի հիման վրա (մեթոդ 3) ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդները կիրառելու կանոնները»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օր անց:

Նախագահ

Վ. Բ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2012
թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 202
որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

**նույնական ապրանքներով գործարքի արժեքի հիման վրա (մեթոդ 2) եւ
համանման ապրանքներով գործարքի արժեքի հիման վրա (մեթոդ 3)
ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդները կիրառելու**

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոններն օգտագործվում են 2008 թվականի հունվարի 25-ի «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 6-րդ եւ 7-րդ հոդվածներով սահմանված՝ ապրանքների մաքսային արժեքը որոշելու մեթոդների կիրառության դեպքում:

2. Սույն կանոնները մշակվել են Համաձայնագրի, 1994 թվականի «Սակագների եւ առետրի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» համաձայնագրի դրույթների, այդ թվում՝ դրան կից բացատրական նշումների, ինչպես նաեւ Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային գնահատման տեխնիկական կոմիտեի նյութերի հիման վրա՝ նույնական ապրանքներով գործարքի արժեքի հիման վրա (մեթոդ 2) եւ համանման ապրանքներով գործարքի արժեքի հիման վրա (մեթոդ 3) ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդների միանման կիրառությունն ապահովելու նպատակով:

3. Մաքսային միության միասնական մաքսային տարածք (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային տարածք) ներմուծվող ապրանքների մաքսային

արժեքն ըստ 2-րդ մեթոդի եւ ըստ 3-րդ մեթոդի որոշելու կարգն ու պայմանները կիրառվում են անալոգիայով՝ բացառությամբ այն բանի, որ մի մեթոդի կիրառման ժամանակ օգտագործվում են տեղեկություններ՝ նույնական ապրանքների մասին, իսկ մյուս մեթոդի կիրառման ժամանակ՝ տեղեկություններ՝ համանման ապրանքների մասին:

Դրա հետ կապված՝ սույն կանոններում համապատասխան դեպքերում օգտագործվում է «նույնական կամ համանման ապրանքներ» հասկացությունը:

4. Ապրանքների մաքսային արժեքն ըստ 2-րդ մեթոդի կամ ըստ 3-րդ մեթոդի որոշելիս օգտագործվում է համապատասխանաբար նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքը:

Նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեք է համարվում այդ ապրանքների մաքսային արժեքը, որն ավելի վաղ սահմանվել է Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան եւ ընդունվել է մաքսային մարմնի կողմից:

5. 2-րդ մեթոդը կամ 3-րդ մեթոդը կիրառելու դեպքում մաքսային մարմնի եւ հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) միջեւ կարող են անցկացվել խորհրդակցություններ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ապրանքների մաքսային արժեքը նշված մեթոդներից մեկով որոշելու համար արժեքային հիմքի հիմնավորված ընտրություն կատարելու նպատակով:

Մաքսային մարմնի եւ հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) միջեւ խորհրդակցությունների ընթացքում տեղեկություններ փոխանակելիս պետք է կատարվի Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ առեւտրային գաղտնիքը պահպանելու մասին պահանջը:

II. Նույնական եւ համանման ապրանքներ

6. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է հետեւյալը.

«նույնական ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք բոլոր առումներով նույնն են, այդ թվում՝ իրենց ֆիզիկական հատկանիշներով, որակով եւ համբավով: Արտաքին տեսքի աննշան տարբերությունները հիմք չեն այդ ապրանքները նույնական չհամարելու համար, եթե մնացած բոլոր հատկանիշներով դրանք համապատասխանում են սույն պարբերության եւ սույն կետի չորրորդ պարբերության պահանջներին.

«համանման ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք բոլոր առումներով, նույնական չլինելով՝ ունեն նման հատկանիշներ եւ կազմված են նման բաղադրիչներից, արտադրված են նույն նյութերից, որը թույլ է տալիս դրանց կատարել գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ միեւնույն գործառույթները, եւ որոնք կարող են լինել առետրային տեսանկյունից փոխադարձ փոխարինելի: Ապրանքների համանման լինելը որոշելիս հաշվի են առնվում դրանց այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք որակը, համբավը եւ ապրանքային նշանի առկայությունը:

Ապրանքները չեն համարվում նույնական կամ համանման, եթե դրանք արտադրված չեն նույն երկրում, որտեղ արտադրվել են գնահատվող (ներմուծվող) ապրանքները, կամ եթե դրանց նախագծումը, մշակումը, ինժեներակոնստրուկտորական աշխատանքները, գեղարվեստական ձեւավորումը, դիզայնը, էսքիզները եւ գծագրերն ու համանման այլ աշխատանքներ կատարվել են Մաքսային միության մաքսային տարածքում: Ապրանքների նկատմամբ կիրառվող «արտադրված» («արտադրված են») հասկացությունն ունի նաեւ «հայթայթված», «աճեցված», «պատրաստված (այդ թվում նաեւ ապրանքների հավաքակցման, հավաքման կամ կազմատման միջոցով)» հասկացությունների իմաստները: Ոչ գնահատվող (ներմուծվող) ապրանքներն արտադրող, այլ մեկ այլ անձի կողմից արտադրված նույնական կամ համանման ապրանքները դիտարկվում են միայն այն դեպքերում, երբ չեն հայտնաբերվել միեւնույն արտադրողի կողմից արտադրված նույնական կամ համանման ապրանքներ, կամ առկա տեղեկություններն օգտագործման համար ընդունելի չեն համարվում:

Օրինակ 1: Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվում են երկու մեքենաներ, որոնք բոլոր առումներով նույնն են (ունեն միեւնույն ապրանքանիշը, միեւնույն լրակազմը եւ այլն), բայց տարբերվում են գույնով, ինչը համարվում է տարբերություն արտաքին տեսքի առումով:

Այն դեպքում, երբ գույնի նշված տարբերությունը չի ազդել ապրանքի արժեքի վրա, նման տարբերությունը կարող է դասվել աննշան տարբերությունների շարքին, եւ մեքենաները կճանաչվեն նույնական: Սակայն, եթե դիտարկվող մեքենաներից մեկը ներկելիս օգտագործվել են բացառիկ գույներ, անոգրաֆիա, գունագրաֆիկ երանգավորում եւ այլն ինչը զգալի ազդեցություն է ունեցել դրա արժեքի վրա, ապա այդպիսի մեքենաները չեն կարող ճանաչվել նույնական:

Օրինակ 2: Տարբեր գնորդների կողմից Մաքսային միության մաքսային տարածք են ներմուծվում միեւնույն ապրանքանիշի պողպատյա թիթեղներ, որոնք պատրաստված են ածխածնային պողպատից, նույնն են զլոցվածքի ճշտության, նյութի վիճակի, եզրի բնույթի առումով, սակայն նախատեսվում է դրանք օգտագործել տարբեր նպատակների համար:

Չնայած նրան, որ գնորդներից մեկը մտադիր է թիթեղներն օգտագործել մեքենաների թափքեր պատրաստելու համար, իսկ մյուսը՝ վառարանների արտադրության մեջ, փվյալ պողպատյա թիթեղները համարվում են նույնական:

Օրինակ 3: Միեւնույն արտադրողի՝ բոլոր առումներով նույն բամբակյա գործվածքը ներմուծվում է Մաքսային միության մաքսային տարածք երկու գնորդների կողմից միեւնույն քանակությամբ, բայց տարբեր գներով:

Միեւնույն ժամանակ հայտնի է, որ գնորդներից մեկն արտադրողի հետ կնքել է երկարաժամկետ պայմանագիր, որով ապրանքի բազմակի մատակարարում է նախատեսվում, իսկ երկրորդ գնորդը կնքել է պայմանագիր՝ ապրանքի մեկանգամյա մատակարարման մասին: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ արտադրողը տարբեր գներ է սահմանել այդ գնորդների համար: Այդպիսով, ներմուծվող բամբակյա գործվածքի գների տարբերությունը պայմանավորված է վաճառքի առելուրային մակարդակների տարբերությամբ:

Տվյալ դեպքում մի գնորդի կողմից ներմուծվող բամբակյա գործվածքը նույնական կլինի մյուս գնորդի կողմից ներմուծվող բամբակյա գործվածքի հետ: Ընդ որում, Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ գործարքի արժեքը պետք է ճշգրտվի՝ հաշվի առնելով վաճառքի առելարային մակարդակների տարբերությունները:

Օրինակ 4: Մաքսային միության մաքսային տարածք են ներմուծվում կանացի զգեստների երկու խմբաքանակ: Երկու խմբաքանակների զգեստներն էլ արտաքննապես միանման են (ունեն միեւնույն ձեւվածքը), կարված են ըստ նույն նմուշի, միեւնույն որակի 100 տոկոսանոց բնական մետաքսից, բայց միեւնույն ժամանակ տարբերվում են չափսերով եւ գունազարդմամբ: Բացի այդ, մի խմբաքանակի զգեստները արտադրված են հայտնի մոդելավորողի ապրանքանիշի ներքո, իսկ մյուս խմբաքանակի զգեստները՝ ոչ:

Տվյալ դեպքում ապրանքի նույնականության հարցը որոշելիս էական գործոն է համարվում հայտնի մոդելավորողի ապրանքանիշի առկայությունը, ինչն ազդում է շուկայում ապրանքի համբավի վրա: Հայտնի մոդելավորողի անունը գների այլ մակարդակ եւ սպառողական այլ շուկա կթելադրի՝ ի տարբերություն երկրորդ խմբաքանակի զգեստների, որոնք արտադրված են ոչ այնքան հայտնի մոդելավորողի ապրանքանիշի ներքո: Սրա հետ կապված՝ առաջին խմբաքանակի զգեստներն ու երկրորդ խմբաքանակի զգեստները չեն կարող ճանաչվել նույնական կամ համանման:

Օրինակ 5: Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվում են ռետինե դողածածկաններ, որոնք տեսակով (ձմեռային, բուլթակավորված), չափսով, արագության ցուցիչով, բեռնվածության ցուցիչով նույնն են, պատրաստված են միեւնույն երկրում գտնվող երկու տարբեր արտադրողների կողմից: Ընդ որում, արտադրողներից յուրաքանչյուրն ունի իր ապրանքային նշանը:

Սակայն այդ արտադրողների կողմից արտադրված դողածածկանները պատրաստված են ըստ նույն չափանիշների, ունեն միեւնույն որակը, շուկայում միեւնույն համբավն են վայելում եւ օգտագործվում են Մաքսային միության մաքսային տարածքում մեքենաների արտադրության համար: Կապված այն բանի

հետք, որ տվյալ ռեպրինտ դողածածկաններն արտադրված են տարբեր ապրանքային նշանների ներքո, դրանք չեն համարվում բոլոր առումներով նույնը եւ չեն կարող դիտարկվել որպես նույնական:

Դրա հետք մեկտեղ ռեպրինտ դողածածկաններն ունեն միեւնույն բնութագրերը եւ համբավը շուկայում, ինչը դրանց միեւնույն գործառույթները կատարելու եւ առեւտրային տեսանկյունից փոխադարձ փոխարինելի լինելու հնարավորություն է տալիս: Այսպիսով, հաշվի առնելով, որ ռեպրինտ դողածածկանները պատրաստված են ըստ նույն չափանիշների, միեւնույն նյութերից, շուկայում միեւնույն համբավն են վայելում եւ առեւտրային տեսանկյունից համարվում են փոխադարձ փոխարինելի, դրանք կարող են ճանաչվել համանման:

Օրինակ 6: Մաքսային միության մաքսային տարածք են ներմուծվում նապրիումի սովորական պերօքսիդ՝ սպիտակեցման համար, եւ նապրիումի հատուկ (հատուկ որակի) պերօքսիդ՝ լաբորատոր հետազոտությունների համար: Նապրիումի հատուկ պերօքսիդը պատրաստված է մաքրության բարձր աստիճան ունեցող փոշենման բաղադրիչներից, եւ դրանով պայմանավորված՝ նապրիումի հատուկ պերօքսիդի գինն ավելի բարձր է, քան նապրիումի սովորական պերօքսիդինը: Նապրիումի սովորական պերօքսիդը չի կարող օգտագործվել նապրիումի հատուկ պերօքսիդի փոխարեն, քանի որ նապրիումի սովորական պերօքսիդի մաքրության աստիճանը բավարար չէ լաբորատոր հետազոտություններում այն օգտագործելու համար:

Քանի որ տվյալ ապրանքները բոլոր առումներով նույնը չեն, դրանք չեն կարող դիտարկվել որպես նույնական ապրանքներ:

Նապրիումի հատուկ պերօքսիդի բարձր գնի հետեւանքով այն սպիտակեցման համար օգտագործելը նպատակահարմար չէ, իսկ նապրիումի սովորական պերօքսիդն էլ պիտանի չէ լաբորատոր նպատակներով օգտագործելու համար: Ուստի, չնայած նրան, որ նապրիումի պերօքսիդի երկու տեսակներն էլ օժտված են նման բնութագրերով եւ բաղադրիչների կազմով, դրանք առեւտրային տեսանկյունից փոխադարձ փոխարինելի ապրանքներ չեն համարվում: Այսպիսով, նապրիումի

սովորական պերօքսիդն ու նապրիումի հալուկ պերօքսիդը չեն կարող ճանաչվել որպես համանման ապրանքներ:

Ապրանքների նույնական կամ համանման լինելու վերաբերյալ որոշում կայացնելիս անհրաժեշտ է տարբերել «երկիրը, որտեղ ապրանքներն արտադրված են» եւ «ապրանքների ծագման երկիրը» հասկացությունները, քանի որ ապրանքները նույնական կամ համանման ճանաչելիս կարելի է գործոն է համարվում հենց այն երկիրը, որտեղ ապրանքներն արտադրվել են, այլ ոչ թե այն երկիրը, որը, ապրանքների ծագման երկիրը որոշելու կանոններին համապատասխան (Մաքսային միության մաքսային օրենսգրքի հոդված 58), ճանաչվում է որպես դրանց ծագման երկիր: Ավելի հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, որոնցում երկիրը, որտեղ ապրանքներն արտադրված են, եւ դրանց ծագման երկիրը համընկնում են, քան երբ երկիրը, որտեղ ապրանքներն արտադրված են, ապրանքների ծագման երկիրը որոշելու նշված կանոններին համապատասխան, չի ճանաչվում որպես դրանց ծագման երկիր:

Օրինակ 7: Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվում են երկու ավտոմեքենաներ, որոնցից մեկը հավաքված է Թուրքիայում գտնվող գործարանում՝ Գերմանիայում արտադրված հանգուցամասերից եւ ագրեգատներից, իսկ մյուսն արտադրված է Գերմանիայում գտնվող գործարանում: Այս դեպքում ավտոմեքենայի հավաքման գործողությունները չեն համապատասխանում բավարար վերամշակման չափորոշիչներին: Դրանից ելնելով՝ Թուրքիայում հավաքված ավտոմեքենայի ծագման երկիր է համարվում Գերմանիան, իսկ արտադրման երկիր՝ Թուրքիան: Այսպիսով, քանի որ տվյալ մեքենաներն արտադրված են տարբեր երկրներում (մեկը՝ Թուրքիայում, մյուսը՝ Գերմանիայում), դրանք չեն համարվում ոչ նույնական, ոչ էլ համանման:

III. 2-րդ մեթոդի եւ 3-րդ մեթոդի կիրառման պայմանները

7. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը կարող է որոշվել 2-րդ մեթոդով, երբ դրա մաքսային արժեքը չի կարող որոշվել ներմուծվող ապրանքներով գործարքի արժեքով (մեթոդ 1), մասնավորապես՝

ա) երբ բացակայում է առուվաճառքի գործարքը եւ ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը (Մաքսային միության մաքսային սահմանով ապրանքները տեղափոխվում են առուվաճառքի պայմանագրից տարբերվող պայմանագրով, օրինակ՝ անհատույց պայմանագրով, վարձակալության պայմանագրով, որում սահմանված է որոշակի ժամանակահատվածում ապրանքից օգտվելու համար ամենամսյա վարձավճար) (Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր)։

բ) երբ չի կատարվում Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ 1-ին մեթոդի կիրառման պայմաններից թեկուզ մեկը։

գ) երբ բացակայում են ապրանքի մաքսային արժեքի վերաբերյալ արժանահավատ, քանակապես որոշվող եւ փաստաթղթերով հաստատված տեղեկությունները, այդ թվում՝ փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը հաստատելու եւ փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին լրացուցիչ հաշվեգրումներ կատարելու համար անհրաժեշտ տեղեկությունները (Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետ)։

8. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը կարող է որոշվել 3-րդ մեթոդով, երբ դրանց մաքսային արժեքը չի կարող որոշվել 1-ին եւ 2-րդ մեթոդներով (օրինակ՝ բացակայում են նույնական ապրանքներով գործարքի արժեքի վերաբերյալ տվյալները կամ այնպիսի տվյալներ, որոնք փաստաթղթերով հաստատում են, որ արժեքի ճշգրտումը, որով հաշվի են առնվում վաճառքի առետրային մակարդակների եւ (կամ) նույնական ապրանքների քանակների տարբերությունները, ստույգ է եւ հիմնավորված)։

9. Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքն ըստ 2-րդ կամ 3-րդ մեթոդի որոշելիս պետք է հիմք ընդունել այնպիսի նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքը, որոնք վաճառվել են Մաքսային միության մաքսային տարածք արտահանման նպատակով եւ ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք նույն ժամանակահատվածում, ինչ ներմուծվող ապրանքները, կամ դրան համապատասխան ժամանակահատվածում, սակայն ոչ շուտ, քան գնահատվող (ներմուծվող) ապրանքները ներմուծելուց 90 օրացուցային օր առաջ:

Այսպիսով, Համաձայնագիրը չի սահմանում հստակ ժամանակահատված, թե երբ պետք է նույնական կամ համանման ապրանքները վաճառվեն եւ ներմուծվեն Մաքսային միության մաքսային տարածք, այլ բնորոշում է այն որպես «նույն կամ դրան համապատասխան ժամանակահատված»:

2-րդ մեթոդի եւ 3-րդ մեթոդի կիրառման նպատակներով որպես «նույն կամ դրան համապատասխան ժամանակահատված» դիտարկվում է նախքան Մաքսային միության մաքսային տարածք գնահատվող (ներմուծվող) ապրանքների ներմուծումն ընկած 90 օրացուցային օրը չգերազանցող ժամանակահատվածը: Նման ժամանակահատվածը որոշելու համար պետք է գնահատվող (ներմուծվող) ապրանքների ներմուծման ամսաթիվ համարել այդ ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանելու օրը:

Նախքան գնահատվող (ներմուծվող) ապրանքների ներմուծումը 90 օրացուցային օրվա ընթացքում Մաքսային միության մաքսային տարածք նույնական կամ համանման ապրանքների ներմուծման վերաբերյալ պայմանի կատարումը չի հանգեցնում նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի ինքնաբերաբար ընդունմանը՝ որպես գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեք: Տվյալ դեպքում «նույն կամ դրան համապատասխան ժամանակահատվածն» ընտրելիս հարկ է դիտարկել այն ժամանակահատվածը, որում գնահատվող (ներմուծվող) ապրանքների եւ նույնական կամ համանման

ապրանքների գները համադրելի են եղել, այսինքն՝ անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ ապրանքների շուկայական պայմանները:

«Նույն կամ դրան համապատասխան ժամանակահատվածը» որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են ապրանքի տեսքն ու բնութագիրը, այն սեզոնը, որում կատարվում է գնահատվող ու նույնական կամ համանման ապրանքների ներմուծումը, եւ առետրային սովորույթները (օրինակ՝ համադրելի արժեքները ապրանքի բարձր պահանջարկի եւ պահանջարկի անկման ժամանակահատվածում): Այսպես՝ ժամանակի ընթացքում ապրանքների գները փոխվում են՝ կապված պահանջարկի եւ առաջարկի հետ, կամ ապրանքի բարոյական մաշվածության հետեւանքով (ավելի ժամանակակից եւ տեխնիկապես կատարյալ ապրանքների թողարկում), կամ այս կամ այն ապրանքի նորածեւության փոփոխության արդյունքում, կամ էլ կապված ապրանքի սեզոնային բնույթի հետ (օրինակ՝ խնձորի գինն ամռան վերջին եւ նմանատիպ խնձորի գինը ձմռան սեզոնին) եւ այլն:

Ելնելով ապրանքի տեսքից եւ բնույթից՝ «նույն կամ դրան համապատասխան ժամանակահատվածը» պետք է որոշվի յուրաքանչյուր հստակ դեպքի համար առանձին՝ հաշվի առնելով տվյալ հանգամանքները: Այսպես՝ սեզոնային ապրանքները պետք է դիտարկվեն տարվա ժամանակին համապատասխան (հագուստի ամառային հավաքածուն, բերքահավաքի ժամանակը եւ այլն), տեխնիկական բնույթի ապրանքները (համակարգիչներ, մոնիտորներ, հեռուստացույցներ)՝ տեխնիկական առաջընթացին համապատասխան. նոր տեխնոլոգիաների ստեղծում, գործող տեխնոլոգիաների կատարելագործում եւ ավելի լայն տարածում եւ այլն:

Օրինակ՝ ավտոմոբիլային կուրակիչներ արտադրելիս պատրաստի արտադրանքի արժեքի զգալի մասը կազմում է համաշխարհային շուկայում հաստատուն գին ունեցող կապարը: Եթե կապարի գնի տարանուններն աննշան են, ապա 2-րդ մեթոդի եւ 3-րդ մեթոդի կիրառման նպատակով դիտարկվող ժամանակահատվածը կարող է չորվել խիստ շրջանակների մեջ (եթե կուրակիչների տեխնիկական եւ ֆունկցիոնալ բնութագրերը համադրելի են): Սակայն եթե կապարի

գինը ենթարկվում է զգալի տարանջատման դեպի վեր կամ վար, ապա 2-րդ մեթոդի կամ 3-րդ մեթոդի կիրառման նպատակով «նույն կամ դրան համապատասխան ժամանակահատված» հասկացությունը որոշելիս հարկ է նկատի ունենալ այն ժամանակահատվածը, որում գները, մասնավորապես՝ կապարի, համադրելի են եղել:

Այսպիսով, «նույն կամ դրան համապատասխան ժամանակահատված» հասկացության ներքո ամենից առաջ ենթադրվում է տվյալ ապրանքի շուկայում միանման (մոտ) իրավիճակի, այսինքն՝ շուկայական կայուն պայմաններով ժամանակահատվածը:

10. 2-րդ մեթոդը կամ 3-րդ մեթոդը չի կիրառվում, եթե բացակայում են Մաքսային միության մաքսային տարածք նույնական կամ համանման ապրանքների ներմուծման մասին փաստաթղթերով հաստատված տվյալները, կամ այնպիսի տվյալներ, որոնք փաստաթղթերով հաստատում են, որ նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի ճշգրտումը, որով հաշվի են առնվում վաճառքի առևտրային մակարդակների եւ (կամ) նույնական կամ համանման ապրանքների քանակների տարբերությունները, ինչպես նաեւ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 4-6-րդ ենթակետերում նշված ծախսերի՝ այդ ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հեռավորությունների եւ օգտագործված փոխադրամիջոցների տեսակների տարբերություններով պայմանավորված զգալի տարբերությունը, ստույգ են եւ հիմնավորված:

IV. Նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի ճշգրտումը

11. Գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար 2-րդ կամ 3-րդ մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է առավելագույնս օգտագործել այն նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքը, որոնք վաճառվել են նույն առևտրային մակարդակում եւ ըստ էության նույն քանակությամբ, ինչ գնահատվող (ներմուծվող) ապրանքները:

12. Վաճառքի առետրային մակարդակների տարբերությունները հաշվի առնելով՝ գործարքի արժեքի ճշգրտման վերաբերյալ հարցը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել ապրանքների իրացման գործընթացում գնորդի զբաղեցրած դիրքը, մասնավորապես, արդյոք գնորդը մտադիր է՝

հետագայում ապրանքներն իրացնել մեծածախ կարգով,

հետագայում ապրանքներն իրացնել մանրածախ կարգով,

ապրանքներն օգտագործել սեփական կարիքների համար:

Բացի այդ, հարկ է հաշվի առնել նաեւ տվյալ ապրանքների շուկայում վաճառողի զբաղեցրած դիրքը, այսինքն՝ արդյոք ապրանքները վաճառվում են անմիջապես արտադրողի, թե մեծածախ վաճառողի, պաշտոնական մատակարարի կամ այլ անձի կողմից:

13. «Ըստ էության նույն քանակությամբ» հասկացությունը նշանակում է, որ վաճառված նույնական կամ համանման ապրանքների քանակը կարող է չհամընկնել վաճառված գնահատվող (ներմուծվող) ապրանքների քանակի հետ, ընդ որում, դրանց քանակների տարբերությունը չի անդրադառնում ապրանքի միավորի գնի վրա, այսինքն՝ գլխավոր գործոնը ապրանքի միավորի գինն է: Այսպիսով, այն դեպքում, երբ վաճառողը ապրանքի միավորի գինը սահմանել է՝ ելնելով ապրանքի վաճառվող միավորների քանակից, եւ եթե նույնական կամ համանման եւ գնահատվող (ներմուծվող) ապրանքները նույնիսկ քանակապես տարբեր լինելու դեպքում գտնվում են գնային միեւնույն տիրույթում (ապրանքի միավորի գինը ինչպես նույնական կամ համանման ապրանքների, այնպես էլ գնահատվող (ներմուծվող) ապրանքների դեպքում միեւնույնն է), ապա դա նշանակում է, որ ապրանքները վաճառվում են ըստ էության նույն քանակությամբ:

Օրինակ՝ վաճառվում է որոշակի դեղային պատրաստուկ, որի միավորի գինը սահմանված է փարբերակված՝ ելնելով ձեռք բերվող փաթեթների քանակությունից՝

10–50 փաթեթի դեպքում՝ 65 դրամական միավոր յուրաքանչյուր փաթեթի համար,

51–100 փաթեթի դեպքում՝ 60 դրամական միավոր յուրաքանչյուր փաթեթի համար,

101 եւ ավելի փաթեթի դեպքում՝ 55 դրամական միավոր յուրաքանչյուր փաթեթի համար:

Այս դեպքում ըստ էության նույն քանակությամբ վաճառքը նշանակում է, որ վաճառված նույնական ապրանքների քանակը եւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների քանակը այն նույն գնային տիրույթում է, որի համար սահմանված է ապրանքի միավորի գինը. ապրանքները փաստացիորեն կարող են վաճառվել տարբեր քանակներով, սակայն ըստ էության, այսինքն՝ ապրանքի միավորի գնի տեսանկյունից դիտարկվում են որպես նույն քանակությամբ վաճառված: Օրինակ՝ ներմուծվում է 110 փաթեթ գնահատվող ապրանք, եւ կան փաստաթղթերով հաստատված տվյալներ՝ նույնական ապրանքներով երկու գործարքների արժեքների վերաբերյալ՝ Ա գործարքով ապրանքները ներմուծվել են 150 փաթեթ քանակությամբ, Բ գործարքով՝ 100 փաթեթ քանակությամբ: Միաժամանակ կան փաստաթղթերով հաստատված տվյալներ այն մասին, որ ապրանքի միավորի գինը կախված է վաճառվող խմբաքանակում ապրանքի միավորների քանակությունից: Ելնելով այս տեղեկություններից (գների սանդղակից)՝ կարելի է եզրակացնել, որ գնահատվող (ներմուծվող) ապրանքները եւ դրանց համանման ապրանքները, Ա գործարքի համաձայն, պատկանում են գնային մի տիրույթի (101 եւ ավելի փաթեթ)՝ յուրաքանչյուր փաթեթի դիմաց 55 դրամական միավոր գնով, իսկ նույնական ապրանքները, Բ գործարքի համաձայն, պատկանում են գնային մեկ այլ տիրույթի (10–50 փաթեթ)՝ յուրաքանչյուր փաթեթի դիմաց 60 դրամական միավոր գնով: Այսպիսով, ապրանքների մաքսային արժեքը 2–րդ մեթոդով որոշելու նպատակով կարող են օգտագործվել Ա գործարքի տվյալները:

14. Եթե գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ նույն առետրային մակարդակում եւ ըստ էության նույն քանակությամբ վաճառված նույնական կամ համանման ապրանքներով գործարք չի հայտնաբերվել, ապա օգտագործվում են առետրային այլ մակարդակում եւ (կամ) այլ քանակությամբ վաճառված նույնական

կամ համանման ապրանքներով գործարքի վերաբերյալ տեղեկություններ, այսինքն՝ այնպիսի գործարքի, որը բավարարում է հետևյալ պահանջներից մեկը՝

նույնական կամ համանման ապրանքների վաճառքն իրականացվել է նույն առևտրային մակարդակում, ինչ գնահատվող (ներմուծվող) ապրանքները, սակայն այլ քանակությամբ.

նույնական կամ համանման եւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների վաճառքն իրականացվել է առևտրային տարբեր մակարդակներում, սակայն ըստ էության նույն քանակությամբ.

նույնական կամ համանման եւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների վաճառքն իրականացվել է առևտրային տարբեր մակարդակներում եւ տարբեր քանակությամբ:

Նշված պահանջներից մեկը բավարարող գործարք հայտնաբերելու դեպքում անցկացվում են արժեքի համապատասխան ճշգրտումներ՝ կապված միայն քանակական գործոնների կամ միայն առևտրային մակարդակի գործոնների կամ եւ՝ քանակական, եւ՝ առևտրային մակարդակի գործոնների հետ:

Սույն կանոնների նպատակներով «եւ (կամ)» շաղկապները թույլ են տալիս վաճառքի վերաբերյալ տվյալներն օգտագործել ճկուն ձևով եւ նշված պահանջներից ցանկացածը կատարելիս անել անհրաժեշտ ճշգրտումներ:

15. Վաճառքի առևտրային մակարդակներում եւ (կամ) ապրանքների քանակներում տարբերությունների առկայությունն ինքնին չի առաջացնում ճշգրտում անցկացնելու պահանջ: Ճշգրտումն անհրաժեշտ է, եթե այդ տարբերություններն ազդել են ապրանքի գնի վրա: Այն դեպքում, երբ գնի տարբերությունը պայմանավորված է վաճառքի առևտրային մակարդակներում եւ (կամ) ապրանքների քանակներում տարբերությունների առկայությամբ, ճշգրտումն անցկացվում է համեմատվող ապրանքների գները համադրելի տեսքի բերելու համար:

Նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի ճշգրտումն անցկացվում է այնպիսի հավաստի տվյալների հիման վրա, որոնք թույլ են տալիս

նման ճշգրտում իրականացնել, փաստաթղթերով հաստատում են ճշգրտման հիմնավորված եւ ստույգ լինելը՝ անկախ նման ճշգրտման՝ ապրանքների մաքսային արժեքի աճին կամ նվազմանը հանգեցնելու հանգամանքից: Այսպես՝ նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի ճշգրտումը, կապված վաճառքի առեւտրային մակարդակների տարբերության հետ, կարող է իրականացվել վաճառքի առեւտրային տարբեր մակարդակներին վերաբերող գներ պարունակող գործող գնացուցակի առկայության դեպքում:

Օրինակ՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքները մատակարարվում են 10 միավոր քանակությամբ, իսկ նույնական կամ համանման ապրանքները, որոնց մաքսային արժեքը որոշվել է 1-ին մեթոդով եւ ընդունվել մաքսային մարմնի կողմից, մատակարարվել են 500 միավոր քանակությամբ, ընդ որում, այդ ապրանքների առուվաճառքի պայմանագրի պայմաններից հայտնի է եւ փաստաթղթերով հաստատված, որ վաճառողը, քանակից ելնելով, զեղչեր է տրամադրում (օրինակ՝ պայմանագրին գնացուցակ է կցված եղել):

Այդ դեպքում գործարքի արժեքի անհրաժեշտ ճշգրտումը կարող է իրականացվել՝ օգտագործելով նշված գնացուցակը, որից պետք է ընտրել այն գինը, որով ապրանքները վաճառվում են 10 միավոր քանակությամբ: Ընդ որում, չկա անհրաժեշտություն փնտրելու նույնական կամ համանման ապրանքների վաճառք՝ հենց 10 միավոր քանակությամբ, եթե առկա գնացուցակը կազմված է այնպես, որ միեւնույն գինը սահմանված է ապրանքների որոշակի քանակական տիրույթի, օրինակ՝ 1-ից 100 միավորի նկատմամբ:

16. Նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի ճշգրտումն անցկացվում է նաեւ այն դեպքում, երբ առկա է զգալի տարբերություն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 4-6-րդ ենթակետերում նշված ծախսերում, մասնավորապես՝

ա) մինչեւ Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող օդանավակայան, ծովային նավահանգիստ կամ ապրանքների ժամանման այլ վայր ապրանքների տեղափոխման (փոխադրման) ծախսերում,

բ) ապրանքների բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման եւ Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող օդանավակայան, նավահանգիստ կամ ապրանքների ժամանման այլ վայր դրանց տեղափոխման (փոխադրման) հետ կապված այլ գործողությունների կատարման ծախսերում,

գ) նշված գործողությունների հետ կապված ապահովագրական ծախսերում:

Օրինակ՝ արտահանման երկիրն ունի մեծ տարածք, եւ գնահատվող ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք են ներմուծվել այդ երկրի սահմանային տարածաշրջանից, իսկ նույնական կամ համանման ապրանքները ներմուծվել են արտահանման երկրի սահմանից զգալի հեռավորության վրա գտնվող տարածաշրջանից:

Այս դեպքում գնահատվող (ներմուծվող) ապրանքների եւ նույնական կամ համանման ապրանքների տեղափոխման (փոխադրման) ծախսերն էականորեն կտարբերվեն:

Որոշ ծովային նավահանգիստներում, որոնց տարածքով ապրանքներ են արտահանվում կամ ներմուծվում, ենթակառուցվածքի օգտագործման, ծովագնացության անվտանգության ապահովման եւ ծովային նավահանգիստներում կարգի պահպանման ծառայությունների համար կատարվում են ավելի բարձր նավահանգստային գանձումներ, քան այլ ծովային նավահանգիստներում: Կարող են տարբերվել նաեւ ծովային նավահանգիստներում ապրանքների բեռնման, բեռնաթափման եւ փոխաբեռնման գործողությունների դիմաց վճարումների, կառանելու, նավամատուցում եւ խարսխակայանում կայանելու դիմաց վճարումների հետ կապված եւ նման այլ ծախսերը:

Կախված նրանից, թե ինչ տեսակի փոխադրամիջոցով են փոխադրվել գնահատվող (ներմուծվող) եւ նույնական կամ համանման ապրանքները, դրանց տեղափոխման (փոխադրման) ծախսերը նույնպես կարող են զգալիորեն տարբերվել (օրինակ՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքները մատակարարվում են երկաթուղային, իսկ նույնական կամ համանման ապրանքները մատակարարվել են օդային փոխադրամիջոցով, որն ավելի թանկ է):

Ապահովագրության հետ կապված ծախսերում կարող են զգալի տարբերություններ լինել՝ կախված գնահատվող (ներմուծվող) եւ նույնական կամ համանման ապրանքների տեղափոխման (փոխադրման) փոխադրամիջոցի տեսակից եւ երթուղու ընտրությունից:

Սույն կետում նշված ծախսերում տարբերությունների ճշգրտումը հնարավոր է անցկացնել գնահատվող (ներմուծվող) եւ նույնական կամ համանման ապրանքների՝ տարբեր փոխադրամիջոցներով տեղափոխման (փոխադրման) սակագների եւ դրանց մատակարարումն իրականացնելիս ապահովագրության սակագների վերաբերյալ փաստաթղթերով հաստատված տվյալների առկայության դեպքում:

17. Համաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետին եւ 7-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ այն դեպքում, երբ հայտնաբերվել են նույնական կամ համանման ապրանքներով գործարքի մեկից ավելի արժեքներ (վաճառքի առևտրային մակարդակի եւ (կամ) ապրանքների քանակների, ինչպես նաեւ սույն կանոնների 16-րդ կետում նշված ծախսերում տարբերությունները հաշվի առնելով գործարքի արժեքի համապատասխան ճշգրտում անցկացնելուց հետո), գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար կիրառվում է դրանցից ամենացածրը: